**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՊՊԾ-ԳՀԾՁԲ-2026/17-1»**

ք. Երևան

«02» 04 2026թ.

«ՀՀ պետական պահպանության ծառայությունը», ի դեմս ՀՀ պետական պահպանության ծառայության պետ Ա. Գասպարյանի, որը գործում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրիգորյանս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է. 622000 ՀՀ դրամ

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է. 622000 ՀՀ դրամ

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

ՄԳ/ՆԳ – 1

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման
գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ
և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում
Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն
միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը
հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք
կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի
միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,
իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր
մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության
դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ
համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին
կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,
որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ
պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր
դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը
լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար
ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան
պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7
օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող
է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված
ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու)
օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի
կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս
են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն
ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված
հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող
նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման
հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ
ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝
պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ
համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների
նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու
հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն
հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի
լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված
հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու
մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի
էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից
ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի
(այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ
ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում
Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների
հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից:
Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N
4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

արծանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է __**5**__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ պետական պահպանության ծառայություն

ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/հ 900011004497

ՀՎՀՀ 00006796

Պետ _______________ Ա. Գասպարյան

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Գրիգորյանս» ՍՊԸ

ք.Երևան, Արշակունյաց 51/49

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930066128920100

ՀՎՀՀ 01275577

Տնօրեն _______________ Ա. Գրիգորյան

*Հավելված N 1*
*«    »    20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ CPV 50111260/1 | Գործող օդորակիչների սպասարկում և վերանորոգում, այդ թվում՝ ներսի բլոկի ֆիլտրերի մաքրում, դրսի բլոկի քիմական մաքրում յուղերից, օդորակիչների լիցքավորում, օդորակիչների կոմպրեսորների վերանորոգում, ըստ անհրաժեշտության՝ փոխարինում, օդորակիչների այլ հանգույցների վերանորոգում և ըստ անհրաժեշտության փոխարինում, մասնավորապես՝ պլատայի փոխարինում, կոնդեսատի պոմպի փոխարինում, հովացնող պտտանիվի վենտիլյատորի և այլ դետալների փոխարինում՝ ըստ անհրաժեշտության, սառնագենտի լիցքավորում և այլ խնդիրների լուծում: Օդորակիչների ընդհանուր սպասարկում (պրոֆիլակտիկա): | դրամ | 500000 | 1 | ք. Երևան, Պռոշյան 1-ին փակուղի, ք. Երևան Էջմիածնի խճուղի 88, ք. Երևան Զորափի 72, ք. Երևան Մելիք-Ադամյան 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2026թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ ____________ Ա. Գասպարյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գրիգորյանս» ՍՊԸ
ք.Երևան, Արշակունյաց 51/49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/հ 1930066128920100
ՀՎՀՀ 01275577

Տնօրեն ____________ Ա. Գրիգորյան

## Ծառայությունների, սարքերի և սարքավորումների գնացուցակ

*Աղյուսակ 1**

| | Ծառայությունների և պահեստամասերի անվանումը | Չ/Մ | 9000btu /h (20kqm) 1kw | 12000btu/ h 40 (kqm) 1.3kw | 18000btu/ h (60kqm) 1.7kw | 24000btu /h (80kqm) 2.4kw | Կանալային օդորակիչ | Ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Օդորակիչի մոնտաժում՝ ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ նյութեր | հատ | 20000 | 20000 | 20000 | 20000 | - | 20000 |
| 2 | Օդորակիչի ապամոնտաժում | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 | - | 15000 |
| 3 | Արտահոսքի վերացում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 4 | Սառնագենտ R22 և Սառնագենտի լիցքավորում | կգ | 8000 | 8000 | 8000 | 8000 | - | 8000 |
| 5 | Սառնագենտ R410 և Սառնագենտի լիցքավորում | կգ | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 |
| 6 | Օդորակիչի ռեվերսի կլապան և փոխարինում | հատ | 25000 | 25000 | 29000 | 29000 | 29000 | 29000 |
| 7 | Օդորակիչի պլատաի փոխարինում /ներսի բլոկի/ | հատ | 25000 | 25000 | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 8 | Օդորակիչի պլատայի փոխարինում /դրսի բլոկի/ | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 9 | Օդորակիչի պլատայի վերանորոգում ներսի և դրսի բլոկների | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 10 | Ներսի բլոկի ֆիլտրի մաքրում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 11 | Արտաքին բլոկի մաքրում քիմիական նյութերով | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 12 | Ներսի բլոկի մաքրում քիմիական նյութերով | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 13 | Էլեկտրոշարժիչ ներքին բլոկի փոխարինում | հատ | 12000 | 12000 | 17000 | 17000 | 17000 | 17000 |
| 14 | Հովհար ներսի բլոկի , փոխարինում | հատ | 15000 | 15000 | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 15 | Էլեկտրոշարժիչ արտաքին բլոկի, փոխարինում | հատ | 15000 | 15000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 16 | Հովհար արտաքին բլոկի, փոխարինում | հատ | 13000 | 14000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 17 | Ջերմափոխանակիչի վերանորոգում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 18 | Լիցքավորման փականի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 19 | Էլեկտրակուտակիչի փոխարինում | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 20 | Օդամուղի Էլեկտրակուտակիչի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | ներառյալ կոմպրեսսորի փոխարինումը | հատ | 70000 | 79000 | 105000 | 105000 | 105000 | 105000 |
| 22 | Ջրահեռացման խողովակի փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 23 | Ջրահեռացման խողովակի մաքրում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 24 | Խողովակներ պղնձե , ներառյալ խողովակների փոխարինումը, | մետր | 6000 | 6000 | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 25 | Զոդման աշխատանքներ | կետ | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 26 | Ժայլուզի նորոգում/փոխարինում | հատ | 5500 | 5500 | 5500 | 5500 | - | 5500 |
| 27 | Կոնդենսատորի փոխարինում 35mf | հատ | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 28 | Կոնդենսատորի փոխարինում 45mf | հատ | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 29 | Ռելեի փոխարինում | հատ | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 30 | 404 Սառցագենտ և սառցագենտի լիցքավորում | կգ | - | - | - | - | 9000 | 9000 |
| 31 | կանալային օդորակիչի օդի շրջանառության համակարգի շարժիչի փոխարինում | հատ | - | - | - | - | 60000 | 60000 |
| 32 | կանալային օդորակիչի օդի շրջանառության համակարգի շարժիչի նորոգում | հատ | - | - | - | - | 30000 | 30000 |
| 33 | կանալային օդորակիչի օդի շրջանառության համակարգի շարժիչի ռեմենի փոխարինում | հատ | - | - | - | - | 12000 | 12000 |
| 34 | կանալային օդորակիչի ֆրեոնի ֆիլտրի փոխարինում | հատ | - | - | - | - | 15000 | 15000 |
| 35 | կանալային օդորակիչի սոլենոիդ փականի փոխարինում | հատ | - | - | - | - | 25000 | 25000 |
| 36 | կանալային օդորակիչի թերմոկարգավորիչի փոխարինում | հատ | - | - | - | - | 30000 | 30000 |
| | Ընդամենը | | 379000 | 389000 | 441000 | 441000 | 573500 | 622000 |

**Պատվիրատուն կարող է պահանջել վերը նշված բոլոր ծառայությունների իրականացում մինչև 500 000 դրամի չափով*

***Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝ ՄԳ/ՆԳ-1 է,*

**** Ծառայությունների մատուցումը պետք է կատարվի 1-2 օրվա ընթացքում:*

*Լրացուցիչ՝*

*Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինեն նոր, յուրաքանչյուր փոխարինված պահեստամաս պետք է վերադարձվի պատվիրատուին:*

*Յուրաքանչյուր մատուցված ծառայություն կամ կատարված աշխատանք Պատվիրատուին հանձնվում է համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով, և պարտադիր տեղում ստուգելով պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ սարքերի և սարքավորումների աշխատունակությունը:*

*Առանձին ծառայությունների և փոխարինված նոր պահեստամասերի համար կատարողի կողմից տրվի կատարված աշխատանքների երաշխիքային ժամկետ (նվազագույնը 6 ամիս):*

Հավելված N 2
«     »          20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111260/1 | էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ | - | - | - | 150000 | 175000 | 200000 | 250000 | 300000 | 350000 | 400000 | 450000 | 500000 | 500000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ                Ա. Գասպարյան

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Գրիգորյանս» ՍՊԸ
ք.Երևան, Արշակունյաց 51/49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/հ 1930066128920100
ՀՎՀՀ 01275577

Տնօրեն                Ա. Գրիգորյան

Հավելված 3
«        »             20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
____________________
____________________
գտնվելու վայրը ____________
հհ ____________________
հվհհ ____________________

Պատվիրատու
____________________
____________________
գտնվելու վայրը ____________
հհ____________________
հվհհ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «            » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝    __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «        » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
____________________
ստորագրություն
____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
____________________
ստորագրություն
____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«    »    20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ______________________-ի միջև «--»    20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

______________________-ի    միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

______________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»    20 թ.